ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՆՈՐՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆ /համաձայն «Դատավորի պատմուճանի նկարագրությունը հաստատելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի N 15Լ որոշման/ (առավելագույնը՝ 50 հատ) 1. Լայն ձևվածքով երկար թիկնոց է՝ կարված բարձր որակի ատլասե կտորից /վիսկոզա 35% (շեղում՝ - + 2%) և պոլիէսթեր 65% (շեղում՝ - + 2%), խտություն՝ ոչ պակաս 210գ/մ2/՝ մուգ բալի գույնի, շատ քիչ զգալի նուրբ փայլով, քիչ ճմրթվող: 2. Պատմուճանի դիմացի մասը՝ կոճակափեշերը՝ սկսած ուսակարերից մինչև ներքև ձևավորված է 10 սմ լայնությամբ թավշյա կոճգամով, որի տակ թաքնված են կոճակները: 3. Պատմուճանի պարանոցը ձևավորված է մեծ ու լայն եզրեր ունեցող օձիքով, որը կարված է թավշյա (բարձրորակ, խիտ հյուսվածքով գործվածք) կտորից /100% սինթետիկ գործվածքից, խտություն՝ ոչ պակաս 210գ/մ2/՝ մուգ բալի գույնի և եզրագծված նույն գույնի պարան-ժապավենով: 4. Պատմուճանի կոճակները տեսանելի չեն, թաքնված են կտորի տակ: 5. Պատմուճանի թևքերը շատ լայն են և ազատ, դրանց եզրերը ձևավորված են 22 սմ լայնությամբ թավշյա թևքածալերով /100% սինթետիկ գործվածքից, խտություն՝ ոչ պակաս 210գ/մ2/՝ մուգ բալի գույնի, որոնք հիմնական կտորից առանձնանում են պարանի տեսք ունեցող ժապավենով: 6. Պատմուճանի քղանցքը ձևավորված է 16 սմ թավշյա կտորով /100% սինթետիկ գործվածքից, խտություն՝ ոչ պակաս 210գ/մ2/՝ մուգ բալի գույնի: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքները կարվում են անհատական պատվերով: Գնորդից էլեկտրոնային

	փոստի միջոցով կամ բանավոր պատվերի հայտը ստանալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողը պետք է այցելի Գնորդի կողմից նշված հասցե (ք. Երևան, Վ. Սարգսյան 5 կամ Կորյունի 15/1)՝ չափսերը վերցնելու համար: Պատվերը ձևավորվում է չափսերը վերցնելու պահից: Առաջին խմբաքանակը մատակարարելիս Վաճառողը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Պատմուճանների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ապրանքները (բոլոր նյութերը) պետք է լինեն չօգտագործված: Ապրանքները պետք է լինեն փաթեթավորված, համապատասխան մակնշումով (արտադրության տարեթիվը, արտադրողի տվյալները, ինչպես նաև դատավորի անունը և ազգանունը):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

НОРО ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	